

կամ ուրիշ աւելցուցած վիճիւնները քաղիք ու մինչեւ իրիկուն աղէկութիւն ունէնաք թէսլիմ անկլու կառավարութեանս որ սէպերը նայվին»:

«ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ՍԱՆ ՄԻՔԻՂՕՇԻ ՄԷՁ

Մեծ բան չենք գիտեր Կէօրկէնի (Սան Միքլօշ) եղբայրութեանց գործունէութեան մասին, բայց մեր ձեռքը կայ թանկագին տեղեկութիւն մը անոնց գոյութեան նկատմամբ: «Կտրիճվորաց Եղբայրութեան» մը կանոնադրութիւնը, որ գրուած է 1690-ին եւ այժմ կը գտնուի Պօթօջանի հայ եկեղեցւոյ գիւանատունը, խմբագրուած է ՍանՄիքլօշի մէջ իսկ:

ԿՏՐԻՃ»ՆԵՐԸ ԿԵՌԱՍՅԻ ՄԷՁ

Կեռլա հայաքաղաքը, որուն հիմը դրուեցաւ 1700-ին, բնակուած էր Մոլտովիայէն եկած հայերով: Ասոնք իրենց հետ բերին իրենց բարձրն ու բարբառը:

Կեռլա ունեցաւ իր եղբայրակցութիւններն ալ, իր հիմնուած իսկ օրէն: «Մաշկադործաց Եղբայրութիւնը», օրինակի համար, որ տեսակ մը արհեստակցական ընկերութիւն էր, 1700ին հիմնուեցաւ Վրդարեանի իսկ ձեռքով: 1718-ին գոյութիւն ունէր նաեւ «Վաճառականաց Եղբայրութիւնը», դարձեալ Վրդարեանէ հիմնրւած:

Կար նաեւ «Կտրիճվորաց Եղբայրութիւն» մը, որ 1729-ին վերակազմուեցաւ, ստանալով «Եղբայրութիւն Ամենասուրբ Երրորդութեան» կոչումը:

Ստեփաննոս Ռօշդայ է սոյն եղբայրութիւնը Կեռլայի մէջ հիմնողը, 1729 Օգոստոս 20-ին, տեղւոյն ամուրի երիտասարդութեան խնդրանքով, եւ ինչպէս կ'ըսէ Ռօշդայ իր վաւերացման պաշտօնաթուղթին մէջ «սիրելի որդիքն մեր ի Քրիստոս նորաչէն հայաքաղաքիս Ազապ երիտասարդքն խոնարհարար խնդրեցին ի մէնջ, զի զԵղբայրութիւնն իւրեանց, զար ի վաղուց հետէ ունէին, բայց առանց հաւաստի եկեղեցական կանոնաց, սահմանել, եւ կանոնօք հաստատել յանձն առնուաք»:

Դժբախտարար ոեւէ ուրիշ ծանօթութիւն

չենք գտներ այն երիտասարդական ընկերութեան մասին՝ որ 1729-էն առաջ վաղուց կար եւ որուն կ'ակնարկէ Ռօշդայ: Միայն տեղ մը կ'ըսէ իր կոնդակին մէջ թէ ան նուիրուած էր «Սրբոց Եւտրատիոսեանց Մարտիրոսաց»:

«Հայաքաղաքի կտրիճվորաց եղբայրութեան» 1729-ի կանոնադրութեան համաձայն՝ Եղբայրութիւնը պիտի գտնուի խնամակալութեանը տակ Ս. Երրորդութեան, որուն տօնին ամէն եղբայր պիտի խոստովանի եւ հաղորդուի. ամէն օր պիտի ընէ իր աղօթքը. պիտի վըճարէ իր մուտքի տուրքը եւ տարեկան գումար մը. պիտի խոստովանի եւ հաղորդուի անգամ ընդունուած ատեն. Եղբայրութիւնը պիտի ունենայ երեք մեծաւոր, — Փրէֆէքը, վիցէքրէֆէքը, մարշալէք, որոնք պիտի ընտրուին ամէն տարի Երրորդութեան տօնէն երեք օր առաջ. ժողովէն բացակայող եղբայրը տուգանք պիտի տայ. ժողովին հաշիւ պիտի տան հրաժարող մեծաւորները. մարշալէքին պաշտօնն է եղբայրութեան դաւազանը կրել թափօրի ատեն. պիտի ընտրուին նաեւ չորս եղբայր՝ որոնցմէ երկուքը պիտի ստանձնեն հիւանդներուն հոգը եւ միւս երկուքը խորանին բարեգարդութիւնը. գանձը պիտի մնայ բրէֆէքիին մօտ. հոն պիտի պահուի նաեւ սոյն կոնդակը, զոր ամէն ամիս պիտի կարդան անգամ մը որպէսզի ամէն մէկը իր պարտաւորութիւնը յիշէ. նիստ տեղի պիտի ունենայ երկուշաբաթը հեղ մը բրէֆէքիին տունը. նիւթապէս պարտագանց եղող ընկերը մէկ ֆունտ մոմ տուգանք պիտի տայ. Եղբայրութեան դրամը շահու պիտի տրուի եղբոր մը կամ եղբոր մը միջոցաւ ուրիշի մը մօտ գրաւականի փոխարէն. Եղբայրութիւնը պիտի ունենայ վեց ֆանտատօր «տանուտէր, խելօք ու աստուածալախ» եղբայրներէ, ցմահ ընտրուած. պակասոյն տեղ վեցերորդ մը պիտի ընտրուի. ամէն կտրիճ իր հարսնիքին պիտի հրաւիրէ բոլոր եղբայրները եւ նուէր մը պիտի տայ Եղբայրութեան գանձին. ամուսնանալէ յետոյ կտրիճ մը մէկ տարի եղբայրութեան պիտի չգատուի՝ բայց ազատ պիտի ըլլայ ծառայութենէ: Եղբայրութիւնը պիտի հոգայ Ս. Երրորդութեան խորանին պայծառութիւնը մայր եկեղեցիին մէջ, պիտի ունենայ իր մասնաւոր քահանան, պա-